Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[1] Դուրս գրման ամսաթիվ			[2] Սերիա	[3] Համար
14	Հունվար	2019 թ.	Ա	9288465052
[4] Մատակարարման ամսաթիվ				
14	Հունվար	2019 թ.		

Ճշգրտվող հաշվի

Սերիա	Համար

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 9 4 0 7 9 8 8	
[9] Անվանումը	ՆՅՈՒՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՐԶ. ԴԻՍՊ. Փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ)	
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը		
[11] Բանկային տվյալները	ՎՏԲ Հայաստան բանկ Կապան մ/ճ	N 16022457801500
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ՍՅՈՒՆԻՔ ԿԱՊԱՆ ԿԱՊԱՆ Բաղաբերդի 48	
[13] Լրացուցիչ տվյալներ		

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3	
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը		
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[19] Լրացուցիչ տվյալներ		

[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդամենը ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Թիվ 90554018 քր. գործով դատահոգեբուժական փորձաքննություն	դեպք	1	32833		32833	20	6566.6	39399.6
Ընդամենը						32833	X	6566.6	39399.6

Դուրս գրող ALAVERDYAN ANAHIT 6711590040
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոնը, ստորագրությունը, անուն, ազգանուն

պաշտոնը, ստորագրությունը, անուն, ազգանուն

14/01/2019 17:33:31

Որոշում
ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

03.12.2018թ. ք. Կապան

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա.Վ.Սարգսյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 90554018 քրեական գործի նյութերն ըստ մեղադրանքի Ալեն Համբարձումի Հայրապետյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդվածի առաջին մասով,

պարզեցի.

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժնում քննվող թիվ 90554018 քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ Ալեն Համբարձումի Հայրապետյանը 2014 թվականին կցագրված լինելով ՀՀ ՊՆ Կապանի զինկոմիսարիատում ու ենթակա լինելով պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, առանց հարգելի պատճառների չի ներկայացել հաշվառման վայրի՝ Կապանի զինվորական կոմիսարիատի զորակոչային հանձնաժողովին՝ բժշկական քննություն անցնելու և, ժամկետային զինվորական ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում, խուսափել է ժամկետային զինվորական ծառայության հերթական՝ 2018 թվականի ամառային զորակոչից:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժնում 15.09.2018թ. ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի առաջին մասով հարուցվել է թիվ 90554018 քրեական գործը:

Ալեն Համբարձումի Հայրապետյանին 2018թ-ի նոյեմբերի 16-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդվածի առաջին մասով, որում վերջինս իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել, որ 2014թ-ին կցագրվել է Կապանի զինվորական կոմիսարիատում, ենթարկվել բժշկական զննության, ինչի արդյունքում իր մոտ ախտորոշվել է հիվանդություն՝ համաձայն ՀՀ ՊՆ 410 հրամանի 11գ և 26գ հոդվածների: 2015թ-ին ինքը մասնակցել է զորակոչի աշխատանքներին, Երևան քաղաքի մի շարք հիվանդանոցներում ենթարկվել է բժշկական հետազոտությունների, ինչից հետո ներկայացել է կենտրոնական բժշկական հանձնաժողովին, որի որոշմամբ էլ իրեն տրվել է տարկետում երեք տարի ժամկետով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո, 2018թ-ի ամառային զորակոչի նախապատրաստական աշխատանքներին մասնակցելու նպատակով, իմքը հրավիրվել է Սյունիքի մարզի զինվորական կոմիսարիատ, որտեղից իրեն ուղեգրել են Երևան քաղաքի Ավանի հոգեբուժական բաժանմքուն՝ հետազոտության: Նշված բաժանմունքում ինքը հետազոտվել է ստացիոնար կարգով՝ երկու օր, ինչից հետո գնացել է Հանրապետական հիվանդանոց, որտեղ իրեն վիրահատել են՝ հեռացրել են պոչուկի հատվածում ունեցած կիստան: Հանրապետական հիվանդանոցում ինքը ստացիոնար բուժում է ստացել շուրջ 15 օր, քանի որ հետվիրահատական շրջանում դժվարությամբ էր ապաքինվում, վիրահատական կարերը չեր կպնում: Դուրսգրվելուց հետո ինքը վերադարձել է Կապան քաղաք, ինչից հետո, օրը ստույգ չի հիշել, Սյունիքի մարզի զինկոմիսարիատի աշխատակիցներն իրեն ներկայացրել է կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին, որտեղից իրեն կրկին հետազոտությունների են ուղարկել Երևան քաղաքի Նուբարաշեն համայնքում տեղակայված «Հոգեկան առողջության պահպանման

ազգային կենտրոն» ՓԲԸ, որտեղ էլ ինքը ներկայացրել է իրեն տրված ուղեգիրը: Նշված ընկերությունում ինքը տեղեկացել է, որ հիվանդանոցում պետք է մնա երկու օր: Ինքը բուժքրոջն ասել է, որ չի կարող այդ հիվանդանոցում մնալ, քանի որ պոչուկի շրջանում կիստա են վիրահատել, ինչի համար էլ վերքն օրը մեկ անգամ պետք է վիրակապեն, իսկ հոգեբուժարանում այդ հարմարությունները չկան: Նշված հիվանդանոցից ինքը հեռացել է նույն օրը՝ ժամը 17-ի սահմաններում, առանց հետազոտությունների, և վերադարձել քաղաք Կապան: Դրանից հետո ինքը որևէ այլ բժշկական կենտրոն չի գնացել, քանի որ ամառային զորակոչն արդեն ավարտվել էր: «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերությունում ինքը պատրաստ կլիներ մնալ, հետազոտվել ստացիոնար կարգով, եթե պոչուկի շրջանում հետվիրահատական բուժման, վերքի մշակման, վիրակապման խնդիր չունենար: Իր հիմնական հիվանդությունը կապված է իր ներվերի հետ, շուտ է նյարդայնանում, ընկճվում և այդ վիճակից դուրս գալու համար երբեմ ինքն իրեն թեթևակի վնասվածքներ է պատճառում, ինչից հետո որոշակի չափով հանգստանում է:

Գործով վկա, ՀՀ ՊՆ Սյունիքի մարզի զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետ Սմբատ Աշոտի Դադոյանը ցուցմունք է տվել, որ Կապան քաղաքի բնակիչ Ալեն Համբարձումի Հայրապետյանը 2014թ-ի մայիսի 5-ին կցագրվել է Կապանի զինվորական կոմիսարիատում, ենթարկվել բժշկական զննության, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել նրան հետազոտել նյարդաբանական բաժանմունքում: Ա.Հայրապետյանը 21.05.2014թ-ին «Գիտակցության կորստի նոպա. Էպիլեպսիա» նախնական ախտորոշմամբ ուղեգրվել է Երևանի թիվ 2 հիվանդանոց, որտեղ հետազոտության արդյունքում նրա մոտ ախտորոշվել է «Թեթև վեգետոդիստոնի գիտակցության կորստի նոպաներ անամնեզում /2 նոպա/ սինկոպեի ձևով: Երկակի ԷՈՒԳ վրա փոփոխություններ չկան: Խորհուրդ է տրվում հոգեբույժի կոնսուլտացիա:»: Այդ ամենի արդյունքում Ա.Հայրապետյանին ՀՀ ՊՆ 410-13 հրամանի 11 հոդվածի «Գ» կետով նշանակվել է բուժում: Վերջինս ենթակա է եղել զորակոչի 2015թ-ի ամառային զորակոչին, ավելի ճիշտ՝ նա ենթակա կլիներ զորակոչի, եթե 2015թ-ի ամառային զորակոչի ընթացքում կատարված հետազոտությունների արդյունքում պիտանի ճանաչվեր զինվորական ծառայությանը: Այդ զորակոչի նախապատրաստական աշխատանքների ընթացքում Ա.Հայրապետյանը հրավիրվել է Կապանի զինվորական կոմիսարիատ և հետազոտությունների ենթարկվելու նպատակով 2015թ-ի ապրիլի 14-ին ուղեգրվել.

- «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ»՝ «Նեյրոցիրկուլյատոր դիստոնիա» նախնական ախտորոշմամբ, որտեղ հետազոտվելուց հետո նրա մոտ ախտորոշվել է «Շնչառական առիթմիա /67-86զ/-ը: Հիպոքսիայի երևույթներ առաջային միջնապատային հատվածներում: Սրտի կոմպենսացված ֆունկցիա /ըստ 3 ԷՍԳ և ՎԷՄ տեստի/»:
- «Արմենիա» ԲԿ՝ «Գիտակցության կորստի նոպաներ: վեգետո. անորային դիստոնիա» նախնական ախտորոշմամբ, որտեղ հետազոտվելուց հետո նրա մոտ ախտորոշվել է «Գիտակցության կորստի նոպաներ ըստ անամնեզի: Կրկնակի ԷԷԳ-ները՝ մեկը քնի դեպրիվացիայով նեգատիվ են»:
- «Նորք» հոգեբուժական ԲԿ՝ «Էմոցիոնալ անկայունություն» նախնական ախտորոշմամբ, որտեղ հետազոտվելուց հետո նրա մոտ ախտորոշվել է «Անձի շեշտվածություն, ինքնավնասումներով»:

Հետազոտության արդյունքներով Ա.Հայրապետյանը 2015թ-ի հունիսի 24-ին ներկայացվել է կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին, որտեղ ՀՀ ՊՆ 410-13 հրամանի «10^{գ}» և «26^{գ}» հոդվածներով վերջինս ճանաչվել է պիտանի զինվորական

ծառայության՝ սահմանափակումով, իսկ նույն հրամանի «7բ» հոդվածով ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայությանը և նրան տրվել է տարկետում երեք տարի ժամանակով:

Տարկետման ժամկետը լրանալուց հետո Ա.Հայրապետյանը 2018թ-ի ամառային զորակոչի նախապատրաստական աշխատանքների ժամանակ հրավիրվել է Սյունիքի մարզի զինվորական կոմիսարիատ, ենթարկվել բժշկական զննության և հետազոտությունների ենթարկվելու համար 2018թ-ի մայիսի 5-ին ուղեգրվել.

- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ՝ «Աջ երիկամի պտոզ, միզաքարային հիվանդություն» նախնական ախտորոշմամբ, որտեղ հետազոտվելուց հետո նրա մոտ ախտորոշվել է «ՄՔՀ: Քարեր երկու երիկամներում 0.2-0.4սմ: Ձախ երիկամի երկատում: Պրոտեինուարիա: Լեյկոցիտուրիա»:
- «Արմենիա» ԲԿ՝ «Պոչուկի շրջանի էպիթելային ուղիներ» նախնական ախտորոշմամբ, որտեղ հետազոտվելուց հետո նրա մոտ ախտորոշվել է «Պոչուկի շրջանի բարդացած էպիթելային ուղիներ»:
- «Ավան» ՀԱԿ՝ «Անձի էմոցիոնալ անկայուն խանգարում» նախնական ախտորոշմամբ, որտեղ հետազոտվելուց հետո նրա մոտ ախտորոշվել է «Անձնային գծերի շեշտվածություն, ինքնավնասումներ առաջացնող վարք» (Z-73.1), (Z-72.8):

Ա.Հայրապետյանի առողջական վիճակով պայմանավորված նրան վիրահատելու անհրաժեշտություն է առաջացել, ինչի համար էլ 2018թ-ի հունիսի 14-ին «Պոչուկի շրջանի էպիթելային ուղիներ» նա ուղեգրվել է բուժման «Արմենիա» ԲԿ: 2018թ-ի հունիսի 15-ից 30-ը Ա.Հայրապետյանը վիրահատվել է, ստացել հետվիրահատական ստացիոնար բուժում և նրա մոտ ախտորոշվել է «Պոչուկի շրջանի բարդացած էպիթելային ուղիներ, վիճակ ուղիների հեռացումից հետո (18.06.2018թ.): Խորհուրդ է տրվում վիրակապություններ տեղամասային պոլիկլինիկայում»:

2018թ-ի հուլիսի 20-ին Ա.Հայրապետյանը ներկայացվել է կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին, որտեղ որոշում է կայացվել նրան ուղեգրել ստուգիչ հետազոտման «Նուբարաշեն» ՀԱԿ՝ «Անձի խանգարում» նախնական ախտորոշմամբ: Նույն օրը Ա.Հայրապետյանին տրամադրվել է ուղեգիր՝ վերը նշված ստուգիչ հետազոտությունն իրականացնելու նպատակով: Վերջինս ներկայացել և ընդունվել է «Նուբարաշեն» ՀԱԿ հիվանդանոց, սակայն տեղեկանալով, որ նա այդ հիվանդանոցում պետք է առնվազն երեք օր գիշերի՝ հրաժարվել է հետազոտության ենթարկվել, քանի որ վիրահատությունից հետո նրա վերքը եղել է բաց վիճակում և վարակից ու բարդացումներից խուսափելու նպատակով օրը մի քանի անգամ պետք է վերքը լվացումներ կատարեր ու վիրակապեր: Այդ ամենի մասին նա անձամբ հեռախոսակապով տեղեկացրել է ինձ: Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին ներկայանալու ժամանակ Ա.Հայրապետյանը ցույց է տվել իր հետվիրահատական վիճակը, սակայն բժշկական մասնագետը պատասխանել է, որ այդ հարցին նա կարող է անդրադառնալ նախկինում տարկետում տրամադրած մասնագետի որոշումից հետո, այսինքն՝ ՀՀ ՊՆ 410-13 հրամանի «7բ» հոդվածով Ա.Հայրապետյանի պիտանելիության հարցը որոշելուց հետո միայն հնարավոր կլիներ որոշել, թե նա «Պոչուկի շրջանի բարդացած էպիթելային ուղիներ, վիճակ ուղիների հեռացումից հետո (18.06.2018թ.): Խորհուրդ է տրվում վիրակապություններ տեղամասային պոլիկլինիկայում» ախտորոշմամբ զինվորական ծառայության համար պիտանի է, թե ոչ: Ա.Հայրապետյանի առողջական վիճակը ստուգելու և հետազոտությունը կազմակերպելու նպատակով Կապանի զինկոմիսարիատի բժշկական մասնագետը 2018թ-ի հուլիսի 29-ին զննել է նրա հետվիրահատական վիճակը և արձանագրել. «Պոչուկի շրջանում առկա

է հետվիրահատական վերք, չափավոր շճաթարախային արտահայտումով, շրջակայքում արտահայտված հիպերեմիա, այտուց, այտուց: Ակտիվ շարժումները սահմանափակ են»:

2018թ-ի նոյեմբերի 16-ին Ա.Հայրապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը չհեռանալու մասին: Նույն օրն Ա.Հայրապետյանը ներկայացվել է Սյունիքի մարզի զինվորական կոմիսարիատ՝ առաջնահերթության կարգով նրա զինվորական ծառայության պիտանիության և զորակոչման հարցը լուծելու համար:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Ալեն Հայրապետյանի հիվանդության բնույթը որոշելու, ինչպես նաև քրեական գործի ընթացքը որոշելու նպատակով կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի մասնագիտական հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 243-246 և 248 հոդվածներով,

ո ր ո շ ե ց ի՝

1. Վարույթումս քննվող թիվ 90554018 քրեական գործով նշանակել դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերության փորձագետներին:

Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Մեղադրյալ Ալեն Հայրապետյանը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապու՞մ է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հոգեկան հիվանդությամբ և երբվանի՞ց:

բ/ Եթե Ալեն Հայրապետյանը տառապում է որևէ հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը ձեռքբերովի է, թե ժառանգական, նրա մոտ երբ է առաջացել: 2018թ-ի ամառային զորակոչի ժամանակ (2018թ-ի մայիս-հուլիս ամիսներին) վերջինս տվյալ հիվանդությամբ տառապել է, թե՝ ոչ:

գ/ Ալեն Հայրապետյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ է, թե՝ անմեղսունակ, երբվանից է նա գտնվում հոգեկան այդ վիճակում:

դ/ Եթե Ալեն Հայրապետյանն անմեղսունակ է, ապա նա բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կարիք ունի, թե՝ ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:

2. Փորձագետներին ներկայացել Ալեն Հայրապետյանին, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, տրամադրել քրեական գործի նյութերը:

4. Փորձագետներին խնդրել պատասխանելու նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չեն առաջադրվել, սակայն կարող են առաջանալ փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբուժական և ռազմաբժշկական փորձագետների իրավասությունների մեջ և էական նշանակություն կարող են ունենալ քրեական գործի նախաքննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության համար:

5. Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժնի
ՀԿԳ քննիչ Ա.Վ.Սարգսյան